ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«___» _____ 2016թ. N-----Ա

## ՈՐՈՇՈՒՄ

## ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի հ.451-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով.

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Եղ.Թադևոսյան փողոցի հ.2/1 հասցեում գտնվող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.15062016-01-0145 վկայական) 1030.59 քմ մակերեսով գույքը (հասարակական շինություններ՝ 856.94քմ, 147.39քմ և 26.26քմ ծածկ) և դրա զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ 765.7քմ մակերեսով հողամասը, անհատույց օգտագործման իրավունքով 3 (երեք) տարի ժամկետով տրամադրել «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

# ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծով նախատեսվում է Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Եղ.Թադևոսյան փողոցի հ.2/1 հասցեում գտնվող 1030.59 քմ մակերեսով գույքի և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 765.7 քմ մակերեսով հողամասի նկատմամբ ձևակերպել «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության անհատույց օգտագործման իրավունքը:

Եղ.Թադևոսյան փողոցի հ.2/1 հասցեում գտնվող գույքը, համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.15.06.2016թ հ.15062016-01-0145 վկայականի, հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը:

Հարկ է նշել, որ Շենգավիթ համայնքի ավագանու 24.07.2003թ. որոշման համաձայն քննարկվող տարածքն անհատույց օգտագործման իրավունքով, հինգ տարի ժամկետով տրամադրվել է «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությանը՝ որպես համայնքի կարիքավոր անձանց սոցիալ-առողջապահական ծառայությունների մատուցման համայնքային կենտրոն օգտագործելու համար, սակայն իրավունքը պետական գրանցում չի ստացել:

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությունը 1999 թվականին Շենգավիթ վարչական շրջանում հիմնել է համայնքային կենտրոն՝ իր բարեգործական ճաշարանով /տարածքը 07.05.1999թ գույքի անհատույց օգտագործման պայմանագրով տրամադրվել է Շենգավիթ թաղապետարանի կողմից/, որի միջոցով կազմակերպությունը առ այսօր բազմաթիվ շահառուների մատուցում է սոցիալ-առողջապահական, սննդի և խնամքի բազմաբնույթ ծառայություններ, ինչպես նաև տեղեկատվական խորհրդատվություն և շահառուների հմտությունների զարգացման ու ակտիվացմանն ուղղված դասընթացներ:

2013 թվականից սկսած Երևան քաղաքում և ՀՀ այլ մարզերում Համաշխարհային Բանկի աջակցությամբ ՀՀ կառավարության հետ համատեղ և Ճապոնիայի կառավարության ֆինանսավորմամբ կազմակերպության կողմից իրականացվել է «Հայաստանի աղքատ և կարիքավոր անձանց կենսամիջոցների բարելավում» դրամաշնորհային ծրագիր: Ծրագրով նախատեսվում է Շենգավիթ համայնքային ռեսուրս կենտրոնի վերանորոգումը և հաշմանդամների անարգել տեղաշարժման համար բարեհարմարեցում, որն իրականացնելու համար անհրաժեշտ է տարածքի անհատույց օգտագործման պայմանագիր և անշարժ գույքի անհատույց օգտագործման իրավունքի վկայական:

Ելնելով կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների կարևորությունից և անհրաժեշտությունից, ղեկավարվելով 2015 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2016 թվականի ծրագրի վերաբերյալ» հ451-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով՝ նպատակահարմար է գտնվել բավարարելու «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության խնդրանքը և վերոնշյալ տարածքի նկատմամբ ձևակերպելու անհատույց օգտագործման իրավունքը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

## ՏԵՂԵԿԱՆՔ

## «ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին» որոշման ընդունման կապակցությամբ Երևան համայնքի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

## ՏԵՂԵԿԱՆՔ

## «ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ